ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ս. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ, ԳԱ հրատարակչություն, 1967, 264 էջ

Թուրքական սուլթան Արդուլ Համիդը 1909 թ., երբ վերջնականապես տապալվեց ու արտաքսվեց Կ. Պոլսից, իր հուշերում գրում է, թե իր կառավարման ամբողջ 30 տարվա ընթացքում ձգտել է ստեղծել համամահմեդական մի ուժեղ կայսրություն և հակադրել այն քրիստոնեական Եվրոպային, բայց ափսոսում է, որ չի կարողացել իրագործել իր ցնորամիտ երազանքները։ Թագակիր դաղանը տենչում էր նվաճել Կովկասը, Միջին Ասիան, Ղազախստանը և կայսրության սահմանները արևելքում հասցնել մինչև Ալթայ։ Այդ նպատակին հասնելու համար նա դեռ 70-ական թվականների վերջերին ծրագրեց բնաջնջել հայերին, որոնք, իբր թե, խոչընդոտում էին իր իմպերիալիստական պլանների կենսագործմանը։ Արյունարբու սուլթանը հետագայում կազմակերպեց հայերի պերիոդիկ ջարդեր, իսկ 90-ական թվականներին՝ մասսայական կոտորածներ, բնաջնջելով շուրջ 300.000 հոգի։ Սակայն հայերը, ցուցաբերելով հերոսական դիմադրություն, կարողացան պահպանել իրենց գոյությունը արյունոտ սուլթանի տիրապետության տարիներին։

1908 թ. տապալվեց Համիդը, իշխանությունն անցավ երիտասարդ թուրքերին։ Սրանք չհրաժարվեցին սուլթանի իմպերիալիստական պլաններից, ինչպես նաև հայերին բնաջնջելու դաղափարներից։ Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, երիտթուրքերը դիմեցին ավելի գործնական քայլերի։ 1914 թ. հոկտեմբերին Թալեաթն ու Էնվերը, Ջեմալն ու Նազիմը իրենց համախոհներով հավաքվեցին դաղտնի խորհրդակցության։ Նրանք միաձայն համաձայնեցին Նազիմի այն առաջարկին, թե «հայ ժողովրդին պետք է ոչնչացնել»։ Երիտթուրքերը իրենց այդ հանցագործ որոշումը կենսագործեցին 1915 թ. ապրիլին և մարդկության պատմության մեջ կատարեցին առաջին մեծագույն ցեղասպանությունը։

Բայց ի՞նչ էին անում այդ ժամանակ աշխարհի խոշոր պետությունները, որոնք ունենալով նյութական ու ռազմական մեծ միջոցներ, կարող էին փրկել հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից։

Ահա այդ կարևոր հարցի լուսաբանությանն է նվիրված Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս. Մ. Հակոբյանի վերջերս ռուսերեն լեզվով հրատարակված աշխատությունը։ Հեղինակը քննում է հինգ մեծ պետությունների՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ռուսաստանի քաղաքականությունը առանձին-առանձին և հանգամանորեն վերլուծում նրանց վարքագիծը Արևմտյան Հայաստանում՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և նրա ընթացքում։

Ս. Մ. Հակոբյանը ցույց է տալիս, որ կայզերական Գերմանիան, շահագրգռված լինելով ձեռք բերել դաղութներ և ընդարձակել իր ազդեցությունը ասիական մի շարք երկրների վրա, Արևմտյան Հայաստանի տերիտորիան ամենից առաջ դիտում էր իբրև ռազմա-ստրատեգիական պլացդարմ՝ Ռուսաստանի և Անգլիայի դեմ նվաճողական պատերազմներ ծավալելու համար։ Նա չէր ցանկանում, որ այդ տերիտորիայի վրա ապրեին հայեր, որոնք դերազանցապես ունեին ռուսական կողմնորոշում, այլ բնակվեին այնպիսի ժողովուրդներ, որոնք հավատարիմ լինեին գերմանա-թուրքական միությանը և նրանց ռազմական ձգտումներին։ Գերմանական իմպերիալիստները առաջարկում են Արևմտյան Հայաստանը բնակեցնել թուրքերով և մահմեդական այլ տարրերով, իսկ հայերին արտաքսել Միջագետքի անապատները, որտեղ նրանք կծառայեն իբրև աշխատուժ Բեռլին—Բաղդադ երկաթգծի կառուցման համար։ Գերմանական իմպերիալիզմի ջատագովներից մեկը՝ արտաքին գործերի մինիստրության արևելյան բաժնի պետ Ռորբախը նույնիսկ գտնում էր, որ հայերի ոչնչացումը հանդիսանում է ծայրերկրում հանգստություն հաստատելու և այն Թուրքիայի տիրապետության տակ պահելու միջոցներից մեկը։ Սակայն գերմանացիներն ու թուրքերը, պատկերացնելով այն դժվարությունները, որոնք կապված էին հայերին արտաքսելու հետ, խաղաղ պայմաններում առժամանակ հետաձգեցին այդ հրեշավոր պլանների իրագործումը և դրանք կենսագործեցին պատերազմի տարիներին։ Ընորոշ է, որ կոտորածների

ժամանակ հայերը երբ դիմում էին գերմանական հյուպատոսներին կամ Թուրքիայում գտնվող այլ պաշտոնյաներին օգնության համար, վերջիններս պատասխանում էին, թե «այն, ինչ կատարում են թուրքերը, տրամաբանական է», կամ՝ «հայերդ կրում եք արժանի պատիժ»։ Գերմանացիները նույնիսկ խանգարում էին հայերին՝ կազմակերպելու իրենց ինքնապաշտպանությունը, թուրքերի հետ միասին կոտորում էին նրանց, թալանում և գուրքն ուղարկում Գերմանիա։

Բրիտանական կայսրությունը Արևմտյան Հայաստանի տերիտորիան նույնպես դիտում էր ամենից առաջ ռազմա-ստրատեգիական տեսանկյունից։ Նա վախենում էր, որ եթե Ռուսաստանը նվաճի Արևմտյան Հայաստանը, ապա ելք կունենա դեպի Պարսից ծոցը և սպառնալիք կստեղծի իր հնդկական, արաբական ու եգիպտական գաղութների համար։ Բացի դրանից, Անգլիան Արևմտյան Հայաստանը դիտում էր նաև առևտրական ու տնտեսական տեսանկյունից։ Նա շահագործում էր այդ երկրի տնտեսական հնարավորությունները և նրա վրայով կապվում Պարսկաստանի, կենտրոնական Ասիայի ու անգամ Հնդկաստանի հետ։ Միջազգային հանգամանքները թույլ չէին տալիս Անգլիային նվաճելու Արևմտյան Հայաստանը, ուստի նա գերադասում էր թողնել այն Թուրքիայի տիրապետության տակ։ Անգլիական իմպերիալիստները ձգտում էին որքան կարելի է ուժեղացնել իրենց ազդեցությունը Թուրքիայի վրա և իրենց նպատակին հասնելու համար օգտագործում էին նաև հայկական հարցը։ Նրանք առաջ էին քաշում հայկական բարենորոգումների խնդիրը և դիջումներ պոկելով Թուրքիայից՝ հետաձգում էին այն անորոշ ժամանակով։ Պատերազմի նախօրյակին Անգլիան համաձայնվեց հաստատել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու ծրագիրը, բայց այն պայմանով, որ այդ բարենորոգումները մտցվեն իր ղեկավարությամբ։ Պատերազմի տարիներին, երբ երիտթուրքերը բնաջնջում էին արևմտահայերին, Անգլիայի կառավարող շրջանները խարազանում էին երիտթուրքերին, կարեկցում հայերին։ Սակայն դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ դեմագոգիա, որի նպատակն էր ուժեղացնել Անգլիայում Թուրքիայի նկատմամբ եղած ատելությունը՝ իմպերիալիստական պատերազմը հաջողությամբ ավարտելու համար։ Բնորոշ է, որ անգամ պատերազմի տարիներին բրիտանական ղեկավարները շարունակում էին հետաքրքրվել Արևմտյան Հայաստանով։ Նրանք ստեղծել էին անգլո-հայկական գանազան կազմակերպություններ, բաց էին թողնում նպաստներ, կառուցում էին ձեռնարկություններ (Կովկասում), նախագծում էին Թուրքիայի բաժանման պլանը, առաջ էին քաշում ինքնավար Հայաստանի ստեղծման գաղափարը և այլն։ Անգլիացիները այդ բոլոր քայլերին դիմելիս, հիմնականում հետապնդում էին մեկ նպատակ, այն է՝ որքան հնարավոր էր Արևմտյան Հայաստանը գցել իրենց ազդեցության տակ, իսկ Ռուսաստանին արտամղել այնտեղից։

Ֆրանսիան Թուրքիայի բախտով քիչ չէր հետաքրքրվում, քան իմպերիալիստական մյուս պետությունները։ Նա տվել էր Թուրքիային մեծամեծ պարտքեր, ներդրել իր կապիտալները նրա տնտեսության գանազան ճյուղերում։ Ուստի շահագրգռված էր պահպանել օսմանյան կայսրության ամբողջականությունը, որպեսզի ետ ստանա իր գումարները վերադիրներով, ունենա շահագործման լայն ու մշտական աղբյուր։ Ֆրանսիական իմպերիալիստները ցանկանում էին պահպանել Աբդուլ Համիդի ռեժիմը, քանի որ այն ապահովում էր իրենց հսկայական շահույթները, և դեմ էին Թուրքիայում տառապող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին, քանի որ դրանց հաղթանակը կարող էր զրկել նրանց այդ շահույթներից։ Իհարկե, Ֆրանսիայի կառավարող շրջանները նույնպես, անգլիացիների նման, երբեմն հանդես էին գալիս հայկական հարցով։ Պահանջում բարենորոգումներ կատարել Թուրքիայի հայաբնակ վայրերում, բայց սրանք էլ իրենց հերթին ցանկանում էին զիջումներ ձեռք բերել Թուրքիայից և հենց որ հաջողվում էր, մոռացության էին տալիս հայոց դատը։ Պատերազմի նախօրյակին ֆրանսիական կապիտալիստները ետ չէին մնում իրենց գերմանական ու անգլիական մրցակիցներից Արևմտյան Հայաստանի շուկան նվաճելու գործում։ Ֆրանսիացիները նույնպես Արևմտյան Հայաստանի գլխավոր քաղաքներում նշանակում էին հյուպատոսներ, վարչական ու ոստիկանական աշխատողներ, կառուցում էին ճանապարհներ, մշակում հանքեր, սաստկացնում էին հայ աշխատավորության շահագործումը։ Բայց երբ սկսվեց պատերազմը և կատարվեց արևմտահայերի ողբերգությունը, Ֆրանսիայի կառավարող շրջանները չձեռնարկեցին որևէ լուրջ քայլ այդ ողբերգությունը կանխելու համար։ Նրանք արևմտահայերի փրկությունը տեսնում էին այն բանում, որ Արևմտյան Հայաստանը դառնա իրենց գաղութը կամ կիսագաղութը։ Ֆրանսիայի իմպերիալիստները իրենց ազդեցությունը Արևմտյան Հայաստանում ուժեղացնելու և Ռուսաստանին այնտեղից արտամղելու համար անգլիացիների նման կազմակերպում էին հայ-ֆրանսիական գանազան կազմակերպություններ, տրամադրում միջոցներ՝ հետագայում վերադիրով ստանալու պայմանով, համարում էին հայերին իրենց փոքր դաշնակիցները և այլն։ Ֆրանսիացիները ձգտում էին օգտագործել

հայերին որպես թնդանոթի միս ընդդեմ թուրքերի՝ Սիրիայում և Պաղեստինում իրենց դիրքերը ամրապնդելու համար և երբ հասան իրենց նպատակին, լքեցին նրանց։

Ամերիկայի Միացյալ Նահանգները ևս իրենց հերթին Արևմտյան Հայաստանի տերիտորիան դիտում էին իբրև տնտեսական ու քաղաքական նվաճումների օբյեկտ։ Սրանք ուշ թափանցեցին այս երկիրը, բայց ձգտում էին արագ տիրանալ նրա տնտեսական հնարավորություններին։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում նրանք արդեն հիմնել էին դպրոցներ, դրադարաններ, հիվանդանոցներ, որբանոցներ, արհեստանոցներ և ծավալել միսիոներական գործունեություն։ Միացյալ Նահանգները ձեռք էին գցել նաև օգտակար հանածոների որոշ հանքեր և ձեռնարկել նրանց մշակումը։ Նրանք միաժամանակ առևտուր էին անում Թուրքիայի հետ և շահագործում Արևմտյան Հայաստանի էժան շուկան։ Ամերիկացիները ուշ մտան պատերազմի թատերաբեմ և, մասնակցելով համաշխարհային սպանդին, կանգնեցին Անտանտի կողմը։ Սակայն Թուրքիայի հետ նրանք չկռվեցին, ընդհակառակը, ավելի բարելավեցին իրենց հարաբերությունները, նպատակ ունենալով ուժեղացնել իրենց ազդեցությունը նրա վրա։ Այդ պատճառով էլ ամերիկյան իմպերիալիստները չդիմեցին գործնական որևէ քայլի՝ բռնելու երիտթուրքերի ձեռքերը, երբ վերջիններս կոտորում էին հայերին։ Երես առնելով ամերիկացիների մտերմությունից, Թալեաթը ցինիկորեն առաջարկում էր նրանց տալ թուրքական կառավարությանը այն գումարները, որոնք արևմտահայերը կուտակել էին ամերիկյան դրամարկղներում, քանի որ նրանք բոլորը այժմ բնաջնջված են և այլևս չունեն ժառանգորդներ։

Ցարական Ռուսաստանը վաղուց էր ուզում դրավել Արևմտյան Հայաստանը, նպատակ ունենալով այդ երկրի վրայով դուրս գալ դեպի Պարսից ծոց ու Միջերկրական ծով, ուժեղացնել իր ազդեցությունը Մերձավոր արևելքի ու Աֆրիկայի երկրների վրա։ Սակայն ցարիզմի ճանապարհին կանգնած էին իմպերիալիստական պետությունները, որոնք ուղղակի և անուղղակի կերպով արգելակում էին նրան կատարելու այդ քայլը։ Իմպերիալիստական պետությունների միջև եղած հակասություններից օգտվում էր Թուրքիան և պահում Արևմտյան Հայաստանը իր տիրապետության տակ։ Բայց ցարիզմը չէր հրաժարվում իր մտադրությունից։ Արևմտյան Հայաստանի քաղաքներում նա հաստատում էր հյուպատոսություններ, վերցնում կոնցեսիաներ, տարածում ուղղափառություն, բացում դպրոցներ և վերջապես առաջ քաշում հայկական հարցը։ Ցարիզմը դեմ էր «Հայկական ավտոնոմիայի» գաղափարին, գտնելով, որ այն ոչ միայն կարգելակի իր առաջխաղացմանը դեպի Պարսից ծոց և Միջերկրական ծով, այլև կակտիվացնի Կովկասյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, որոնք վերջին հաշվով կհանգեցնեն Կովկասի անջատմանը Ռուսաստանից։ Նրա երազանքն էր Արևմտյան Հայաստանը՝ առանց հայերի։ 1914 թ. հոկտեմբերին, երբ Թուրքիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, ցարիզմը ընդունեց այդ մարտահրավերը, համարելով պատերազմը մի հարմար առիթ, իր իմպերիալիստական պլանները իրագործելու համար։ Շուտով ռուսական զորքերը ետ շպրտեցին թուրքական հրոսակներին, անցան հակահարձակման, գրավեցին Էրզրումը, Երզնկան, Վանը, Մուշը, Ալաշկերտը, Բաբերդը, Բայազետը, Բիթլիսը և կանգ առան Մոսուլի ու Սերաստիայի վիլայեթների սահմանամերձ շրջաններում։ Ցարական իշխանությունները այդ վայրերում ստեղծեցին զեներալ-նահանգապետություն՝ ռուս պաշտոնյաներով, իսկ հայկական ինքնավարության մասին խոսել անգամ չուզեցին։ Նրանք մեծ դժվարությամբ համաձայնվեցին, որ կոտորածներից փախած արևմտահայերը վերադառնան իրենց հայրենիքը, իսկ արևելահայերին բոլորովին արգելեցին տեղափոխվելու Արևմտյան Հայաստան։ Իշխանությունները նվաճած հողերը համարեցին պետական սեփականություն և դրանց մի մասը տվեցին օգտվելու արևմտահայ գյուղացիներին ոչ թե սեփականության, այլ վարձակալության իրավունքով։ Բայց, ըստ երևույթին, կոտորածներից փրկված և հայրենիք վերադարձած այդ փոքրաթիվ հայության առկայությունը ցանկալի չէր ցարական գաղութարարների համար։ Եվ դրանից ազատվելու համար ցարական բանակը 1915—1916 թթ. կազմակերպեց անհարկադիր նահանջ ու հայերին հանձնեց թուրքական յաթաղանին։ Երբ ռուսական զորքերը կրկին արտամղեցին թուրքերին արևմտահայ հողերից, հանձնեցին արդեն այդ հողերի զգալի մասը ռուս պաշտոնյաներին ու կապիտալիստներին։ Այս իրավիճակը համարյա անփոփոխ մնաց նաև այն բանից հետո, երբ 1917 թ. փետրվարին Պետերբուրգում տապալվեց ցարիզմը և իշխանություն անցավ ժամանակավոր կառավարության ձեռքը։

Ս. Մ. Հակոբյանը մատնանշում է, որ չնայած ցարիզմի ու ժամանակավոր կառավարության գաղութային քաղաքականությանը, Արևմտյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից այնուամենայնիվ կլիներ դրական երևույթ։ Նա այնուհետև բաց է անում վարագույրը և ցույց է տալիս այն զզվելիությունը, որ տեղի էր ունենում Անտանտի պետությունների միջև Թուրքիայի և

հատկապես Արևմտյան Հայաստանի բաժանման համար։ Իմպերիալիստները պատրաստ էին հոշոտելու ոչ միայն հակառակորդին, կամ զոհարերելու փոքր ժողովուրդներին, այլև առիթը ձեռք գցելու դեպքում չոքելու իր երեկվա դաշնակցի կոկորդին։ Հեղինակը բերում է ընթերցողին այն հաստատ համոզման, որ իմպերիալիստական պետություններից և ոչ մեկը չէր ցանկանում պաշտպանել կամ փրկել արևմտահայ ժողովրդին։ Նրանք բոլորը ունեին իրենց ետին նպատակները և այդ նպատակներին հասնելու համար կանգ չէին առնում արևմտահայերի նահատակման առաջ։

Ս. Մ. Հակոբյանը, մերկացնելով իմպերիալիստներին, ցույց է տալիս նաև միջազգային դեմոկրատիայի վերաբերմունքը դեպի հայերը։ Հայկական դատի պաշտպանության և հայ ժողովրդի փրկության համար ոտքի են կանգնում՝ Գերմանիայում միջազգային բանվորական շարժման ականավոր գեկավար Կարլ Լիբկնեխտը, հանրաճանաչ արևելագետ Յոզեֆ Մարկվարտը, դոկտոր Լեպսիուսը, Ֆրանսիայում՝ Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը, Ժակ դը Մորգանը, Անտուան Մեյեն, Ֆրեդերիկ Մակլերը, Ռուսաստանում իրենց բողոքի ձայնը բարձրացրին Մաքսիմ Գորկին, անվանի գիտնական Մաքսիմ Կովալևսկին, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին և շատ ու շատ ուրիշներ։ Բայց իմպերիալիստներն ու թուրքական դահիճները ի վիճակի չէին զգալու նրանց շոնգալից հարվածները կամ լսելու կրակոտ ճառերը։

Գրքի եզրափակիչ մասում հեղինակը նկարագրում է Արևմտյան Հայաստանի հոգեվարքը։ Նա ցույց է տալիս, որ Լենինն ու բոլշևիկները, Արևմտյան Հայաստանը համարելով Թուրքիայի կողմից անեքսիայի ենթարկված, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հռչակեցին նրա ինքնորոշման դեկլարացիան և հաշվի առնելով, որ արևմտահայերը դեռ չէին վերադարձել իրենց հայրենիքը, հարկ համարեցին ռուսական զորքը առայժմ պահել այնտեղ։ Սակայն ռուս զինվորները, հոգնած ու տանջված պատերազմից, երբ լսեցին խաղաղության լուրը, թողեցին Արևմտյան Հայաստանը և վերադարձան հայրենիք։ Բոլշևիկները շտապեցին կանգնեցնել նրանց։ Սակայն հակահեղափոխական գեներալներ Պրժեվալսկին և մյուսները զորացրեցին բանակը։ Թուրքիան, օգտագործելով ստեղծված դրությունը, 1918 թ. փետրվարին անցավ հարձակման և կրկին օկուպացրեց Արևմտյան Հայաստանը։ Երիտասարդ սովետական պետությունը բողոքեց դրա դեմ, բայց թուրքերը տեսնելով Սովետական Ռուսաստանի ծանր վիճակը, հաշվի չառան այդ բողոքը։ 1918 թ. հոկտեմբերին Գերմանիան ու Թուրքիան պարտվեցին։ Հաղթանակը շահած Անտանտի պետությունները Արևմտյան Հայաստանի բախտը վերցրին իրենց ձեռքը։ 1920 թ. ապրիլին նրանք քննեցին Արևմտյան Հայաստանի հարցը Սան-Ռեմոյի կոնֆերանսում, միացրին այն Արևելյան Հայաստանին, որտեղ կառավարում էին դաշնակները և հռչակեցին այսպես կոչված «անկախ Հայաստան»։ Ապա այդ որոշումը հաստատվեց 1920 թ. օգոստոսի 10-ին Թուրքիայի հետ կնքած Սևրի պայմանագրով։ Անտանտի պետությունները ստեղծելով «անկախ Հայաստան» իրագործում էին ոչ թե հայ ժողովրդի դարավոր երազանքները, այլ նայում էին դրա վրա իբրև ժամանակավոր մի բան, որը անհրաժեշտ էր իբրև պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։ Բայց շուտով Թուրքիայում առաջ եկավ քեմալական շարժումը, որը սկզբում ուղղված էր իմպերիալիզմի դեմ, իսկ հետագայում ուղղվեց նաև Կովկասյան ժողովուրդների, հատկապես հայերի դեմ և ընդունեց նվաճողական, գավթողական բնույթ։ Թուրքական զավթիչները խուժեցին Կարս, Արդահան, Սուրմալու, Ալեքսանդրապոլ և ուղղություն վերցրին դեպի Երևան։ Այդ ծանր պահին իմպերիալիստները լքեցին Հայաստանը, թողնելով նրան բախտի կամքին։ Թուրքական զավթիչները 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում դաշնակների հետ կնքեցին պայմանագիր, որով հայ ժողովրդից խլեցին նաև Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը։ Ապա թուրք կառավարությունը Բեքիր Սամի-բեյին ուղարկեց Լոնդոն ու Փարիզ՝ Անտանտի պետությունների հրավիրած կոնֆերանսներին մասնակցելու համար։ 1921 թ. փետրվարի երկրորդ կեսին Լոնդոնի կոնֆերանսում դաշնակիցները զիջումներ պոկելով Թուրքիայից այլ հարցերում, իրենց հերթին համաձայնվեցին թուրքերի հետ՝ հայկական հողերի բռնագրավման հարցում։

Սովետական կառավարությունը այդ ժամանակ զբաղված լինելով հայրենիքի արտաքին ու ներքին թշնամիների դեմ մղվող կռիվներով և խուսափելով նոր բարդություններից թուրքերի հետ, որոնք հրահրում էին իմպերիալիստները, ստիպված եղավ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայի պայմանագրով ճանաչել թուրքական հափշտակումները հայոց հողերի նկատմամբ։

1922 թ. նոյեմբերին Լոզանի կոնֆերանսում Անտանտի պետությունները մի անգամ ևս օգտագործեցին հայկական հարցը թուրքերից զիջումներ պոկելու համար։ Նրանք պահանջեցին թուրքերից՝ իրենց երկրի արևելյան մասում կամ Կիլիկիայում մի օջախ տրամադրել հայերին՝ աշխարհի տարբեր մասերից հավաքվելու և ապրելու համար։ Թուրքական պատվիրակության ղե-

կավարը առարկեց դրան, պատճառաբանելով, թե դա կլինի Թուրքիայի նոր անդամահատում, թե Անտանտի պետությունները իրենք կարող են տալ նրանց այդպիսի օգնություն, քանի որ ավելի շատ հող ունեն, քան Թուրքիան։ Իմպերիալիստները հայկական հարցի մասին վիճաբանությունները շարունակեցին այնքան ժամանակ, մինչև Թուրքիան նրանց զիջումներ կատարեր նեղուցների, կապիտուլյացիաների, օսմանյան պարտքի, Մոսուլի և այլ հարցերում։ Դրանից հետո նրանք «աննկատ» դադարեցրին վիճաբանությունները։ Այդպիսով, հայկական հիվանդ հարցը, Քերզոնի արտահայտությամբ, հանգիստ կերպով փչեց իր հոգին։ Իսկ երբ 1924 թ. հուլիսի 24-ին տերությունները ստորագրեցին Լոնդոնի կոնֆերանսի որոշումները, այլևս չուզեցին անգամ մի խոսք ասել հայերի մասին։

Ս. Մ. Հակոբյանի աշխատությունը պատում է իմպերիալիստների դիմակը և մի անգամ ևս ցույց տալիս ընթերցողներին նրանց մեղսակցությունը հայկական ջարդերին։ Հեղինակը այն գրել է հարուստ սկզբնաղբյուրների հիման վրա, օգտագործելով հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով եղած նյութերը։ Նրա հիմնական եզրակացությունները, մեր կարծիքով, անառարկելի են և աշխատությունը, անշուշտ, պետք է արժանացնել դրական գնահատականի։

Մեր առարկումները վերաբերում են մասնակի հարցերին։ Շարադրանքից ընթերցողը գալիս է այն համոզման, որ արևմտահայերի ցեղասպանության ժամանակ թուրք և քուրդ ժողովրդական մասսաները միայն պաշտպանել և փրկել են հայերին (էջ 17—30)։ Նման դեպքում հազիվ թե տեղի ունենար արևմտահայ ողբերգությունը։ Իրականում թուրք և քուրդ բնակչության մեծ մասը, գտնվելով տակավին մոլլաների ու շեյխերի ազդեցության տակ, գնաց հայկական գենոցիդը կազմակերպողների ետևից և ակտիվ մասնակցություն ունեցավ այդ ահավոր ոճրագործության մեջ։ Իրականում քիչ է եղել հայապաշտպան թուրքերի և քրդերի թիվը։ Հայ ժողովուրդը չի մոռանում նրանց և կհիշի խորին երախտագիտության զգացումով։

Աշխատության մեջ կան որոշ լեզվական անհարթություններ ու անհաջող արտահայտություններ (օրինակ՝ երիտթուրքերը ուզում էին մաքրել Արևմտյան Հայաստանը հայերից, ավելի լավ կլիներ ասել դատարկել հայերից)։ Հեղինակը պատմական աղբյուրներն ու փաստերն օգտագործելիս, հաճախ չի հիշատակում նրանց տարբերվերը և այլն։

Այդ և նման մասնակի թերությունները չեն նսեմացնում Ս. Մ. Հակոբյանի աշխատության գիտական արժեքը։ Նրա գիրքը տևական, համառ ու քրտնաջան աշխատանքի արդյունք է և հանդիսանում է մի կարևոր ներդրում մեր պատմագիտական գրականության մեջ։

Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ